ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԳՀԾՁԲ-20-7/10-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

24 -ը հունիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մանուչարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 31.08.2020թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-7/10 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը և գնման որոշման հիման վրա 01.02.2021թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է Կատարողի կողմից մատուցած ծառայության (այսուհետև՝ Ծառայություն) դիմաց կատարել վճարում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 66,197,520 (վաթսունվեց միլիոն հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կկատարի համապատասխան սույն Համաձայնագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ժամկետում և կարգով:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի դրույթները կիրառվում են թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա սույն Համաձայնագիրը կնքելը ընկած ժամանակահատվածում կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայությունը մատուցվելու դեպքում վճարումն իրականացվում է այդ համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն չձեռքբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան, Բագրամյանի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյան	«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 16 «Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ հ/հ 2472300596330010 ՀՎՀՀ 90018697 տնօրեն Հ. Մանուչարյան

Հավելված N 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	«դերձակի ծառայություններ /կոստյում բամբակյա կեպիով/»	98391120/39	38153520	38153520	38153520
	«դերձակի ծառայություններ /կոստյում բամբակյա կեպիով/»	98391120/40	28044000	28044000	28044000

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ
տնօրեն

Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ